

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒՂԱՐԻԱ.
ԱՆՅՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

Գիտաժողովի զեկույցների ժողովածու

ԵՐԵՎԱՆ

ԵՊՆ ՆՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2009

ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ

**ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՆԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՁԱՎԱՅՐԵՐԸ
(ՄԿՁԲՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԻՑ
ՄԻՆՉԵՎ XX ԴԱՐԻ ՄԿԻՁԲԸ)**

Նայ-բուլղարական առնչություններն ունեն դարերի պատմություն: Դրանց մասին վկայությունները սկսվում են արդեն V դարից: Ընդ որում, հենց այս ժամանակից էլ՝ մասնավորապես V դարի կեսերից, Բուլղարիայի փարածքում, որ այն ժամանակ դեռ հայտնի էր Թրակիա անունով, հանդես են գալիս առաջին հայկական համայնքները: Սկզբնապես դրանց բնակիչներն այն հայ զինվորականներն էին, որոնք այսպեղ էին փեղափոխվել բյուզանդական կայսրերի հրամանով: Նայերի արտաբնակեցումը Բալկաններ կայսրությունը կազմակերպում էր որոշակի հեռահար նպատակներով: Նախ և առաջ դրանով բյուզանդացիները փորձում էին թուլացնել Նյասափանի դիմադրողականությունը, և ապա՝ իրենց մարտունակությամբ հռչակված հայկական զորամասերը պարտավոր էին ամրապնդել փերության Դանուբով անցնող հյուսիս-արևմտյան սահմանները: Այս քաղաքականությունը հարկապես մեծ ծավալներ ընդունեց VI դարի վերջերին: Նայտնի է, որ Մավրիկիոս (Մորիկ) կայսրը ոչ միայն կարող ավել-

լացրեց ժամանակակից Բուլղարիայի փարածք ուղարկվող հայկական զորամասերի քանակը, այլև հետամուտ էր «խուրոք և անհնազանդ» հայերին զանգվածաբար Թրակիա գաղթեցնելու խիստ վրանգավոր ծրագրի իրականացմանը, որն իբր մշտական և կայուն խաղաղություն կհաստատեր Բյուզանդիայի և նրա ավանդական հակառակորդ Պարսկաստանի միջև: Մորիկի քաղաքականությունը շարունակվեց նաև հաջորդ փասնամյակներին: Ցայտուն օրինակ կարող է դիտվել նրա հաջորդ Փոկասի հրամանը, որի մասին վկայում է Մեբեոսը. «Նայոց աշխարհի համար... 30.000 հեծյալ եմ կորցրել: Արդ՝ այնպեղից ինձ համար պետք է 30.000 ծուխ հավաքվի և վերաբնակեցվի Թրակացիների աշխարհում»: Կայսրության այս քայլերը, անշուշտ, ծանր հետևանքներ էին ունենում Նայաստանի համար, միաժամանակ՝ սրվարացնում էին Բուլղարիայի փարածքի հին գաղթավայրերը: VII դարի վերջից սկսվում են արդեն հայբուլղարական անմիջական առնչությունները: Դրանում վճռական դեր խաղաց 681թ. Բավկաններում Առաջին Բուլղարական թագավորության, որպես նոր աշխարհա-քաղաքական իրողության, հանդես գալը: Ընդ որում, այդ փոխհարաբերությունների ակտիվ, պարբերական բնույթի մասին է խոսում բուլղարական պետության հիմնադիր խան Ասպարուխի (Իսպիրուխ) հիշատակումը հայոց «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում: Բուլղարիայի փարածք հայերի ներթափանցումը հատկապես զանգվածային բնույթ ստացավ VIII-IXդդ.: Ընդ որում, վերոնշյալ ավանդական քաղաքականության իրականացմանը զուգահեռ բյուզանդացիները փորձում էին նաև արմատախիլ անել կայսրությանը IXդ. մեծապես սպառնացող պավլիկյան աղանդավորական շարժումը: 872թ., գրավելով պավլիկյանների գլխավոր կենտրոնը՝ Տեփրիկեն (Տեփրիկ), Վասիլ (Բարսեղ) I կայսրը հազարավոր մարդկանց վերաբնակեցրեց Բուլղարիայում: Ինչպես ցույց են տալիս պահպանված տեղանունները, պավլիկյանների բնակավայրերը հիմնականում սփռված էին Նյուսիսային Բուլղարիայում, ուր առ այսօր պահպանվել են Պավլիկենի (Յանտրա գետի Ռոսիցա վրակի հյուսիսային կողմում), Գոռնո- և Դոլնո-Պավլիկենի (Լովչե քաղաքի շրջանում), Կալենիկ (Վիտ գետի հովտում) և այլ տեղանունները: Նայկական հոծ համայնքների առկայության մասին են խոսում նաև մինչև XIX դարը պահպանված Էրմենսկո, Արմենոխոր, Տորոս (Թորոս), Էրմենովո, Արմյանկովցի, Արմենիցա, Էրմենլի, Արմենքյո խիստ բնորոշ անունները կրող բնակավայրերը: X-XIդդ. Բուլղարիայի փարածքում հաստատված հայ բնակչությունը կրոնա-դավանական առումով բաժանված էր 3 հարվածի: Բացի պավլիկյան աղանդավորներից, որոնց ուսմունքը, ինչպես հայտնի

է, գաղափարական խթան հանդիսացավ բողոմիլյան հզոր շարժման առաջացման համար, մեծ թիվ էին կազմում առաքելադավան և քաղկեդոնիկ կամ «իբեր» (իմա՝ վրացի) երջորջվող հայերը: Բուլղարիայի առաքելական հայերի հոգևոր կենտրոնը հնագույն Ֆիլիպոպոլիս (Ֆիլիպե, այժմ՝ Պլովդիվ), քաղաքի առաջնորդությունն էր, որին էին ենթարկվում Նիկոպոլի (Նիկիա), Մզլենի, Դևոլի, Սրեդեցի (այժմ՝ Սոֆիա), Մեծ կամ Վելկո Տըռնովոյի, Սպրումիցայի, և այլ քաղաքների հայ համայնքները: XII դարում Ֆիլիպոպոլսում եղել է հայկական վանք՝ Նովհաննես Ութմանի վանահայրությամբ: Տեղի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը Գրիգոր IV Տղա կաթողիկոսի (1173-1193) կողմից նշանակվել է հայոց եկեղեցու պաշտոնական բանագնաց: Բյուզանդական կայսրերը մեծ թվով հայերի են տեղափոխել նաև Բուլղարիային լեզվա-մշակութային առումով ազգակից Մակեդոնիայի փարածք: Ինչպես վկայում է Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ), Վասիլ (Բարսեղ) II-ը X դարի վերջին «մտածեց իր թագավորության մեջ ապրող հայերին անցկացնել Մակեդոնիա՝ Բուլղարիայի դիմաց, որպեսզի շենացնեն այդ երկիրը. ուստի և շարերին տեղահանեց և փարավ այնտեղ»: Նշված ժամանակահատվածում աշխույժ հայկական համայնքներ էին ձևավորվել Օխրիդում, Բիտոլում, Սկոպլիեում (օսմանյան փրիապետության շրջանում՝ Ուսկյուպ), Վելեսում (Քյունփուրուկ կամ Քյովիուրու) և այլուր: Նայ քաղկեդոնիկները հանդիպում էին ավելի փոքր խմբերով: Նրանց առավել նշանավոր ներկայացուցիչն է Մամուել Կոմսաձազը (Մամուլի, ըստ Ասողիկի՝ «մեր հայոց ազգից»), որն՝ ապստամբելով բյուզանդացիների դեմ, 997թ. դարձավ Արևմտաբուլղարական թագավորության արքա: Առանձնացնել է պետք նաև իշխան Գրիգոր Բակուրյանին, որն իր եղբայր Աբասի աջակցությամբ 1083թ. Բազկովո գյուղում (Պլովդիվից մոտ 30 կմ հարավ) կառուցեց Պեպրիծոնի (Բազկովոյի) հռչակավոր վանքը՝ իր մեծությամբ և նշանակությամբ երկրորդը Ռիլեից հետո: Իր իսկ կողմից ստեղծված միաբանության կանոնադրությունը («Սահմանք», մեզ է հասել նաև հայերեն խմբագրությամբ) իշխանը ստորագրել է «հայերեն գրերով»: Նա իրեն կոչում է հայկական «տանուրեր» և «գորավար» փրիգոտներով՝ նշելով, որ սերում է հայոց նշանավոր տոհմից: Քննարկվող ժամանակաշրջանում Բուլղարիայի հայերի թիվը կազմում էր ավելի քան 50.000 մարդ: Ներագա փասնամյակներին, սակայն, այն նկատելիորեն նվազեց՝ կապված հայ քաղկեդոնիկ և պավլիկյան համայնքների ամբողջական ձուլման հետ: Այնուամենայնիվ, XIV դարից սկսած նկատվում է բուլղարահայերի թվի զգալի աճ՝ որպես արդյունք վերակազմված նոր գաղթականական ալիքի: Ծիշտ է, XIVդ. վերջին Բուլղա-

րիան ինքն էր նվաճվել Օսմանյան կայսրության կողմից, սակայն Հայաստանում փրորող դժնդակ իրավիճակը, մանավանդ՝ Կիլիկյան պետության կործանումը, ապա՝ XVI դարի սկզբից մոլեզնդ, թուրք-պարսկական պայքերազմները, այնպիսի դժոխային իրավիճակ էին ստեղծել հայ ժողովրդի համար, որ հազարավոր մեր հայրենակիցներ հարկադրված էին զանգվածաբար հեռանալ հայրենիքից՝ փրկություն փնտրելով օտար ափերին: Բուլղարիա հասած հայերի համար այս երկիրը դարձավ երկրորդ հայրենիք՝ շնորհիվ բուլղար ժողովրդի ջերմ ընդունելության: Հայերի ներթափանցումը Բուլղարիայի փարածք փեղի է ունեցել երկու հիմնական ուղղություններով: Առաջինը՝ հարավայինը, սկսվել է XV դարի I փասնամյակներին, երբ Կիլիկիայից հազարավոր հայերի գաղթականական խմբեր Կ.Պոլսի վրայով անցել են Բուլղարիա՝ փարածվելով նաև Բալկանյան այլ երկրներում: Թուրք-պարսկական պայքերազմների հետևանքով XVI-XVII դ.դ. հայերի էլ ավելի սրվար զանգվածներ հայտնվեցին Բուլղարիայում: Դրանց մեջ մեծ թիվ էին կազմում Արարատյան երկրի, մասնավորապես Կարբի գյուղաքաղաքի բնակիչները (ի դեպ՝ 1720-ական թվականներին դարձյալ Կարբիից Բուլղարիա է հասել հայերի նոր ալիք. հենց այդպիսի մի ընտանիքում էլ 1769թ. Ռուսչուկ, այժմյան Ռուսե քաղաքում է ծնվել նշանավոր դիվանագետ Մանուկ բեյ Միրզայանը): Տեղափոխված հայերի մեջ զգալի էր նաև նախնիների, դասակարգների, շոտթոքների, մալաթիացիների, դիարբեքիցիների փոսակարար կշիռը: Հայկական համայնքները նկարելիորեն սրվարացան նաև XVII դարի սկզբին ջալալիների վայրագություններից խույս փված հայերի հաշվին, որոնք, Գրիգոր Դարանաղու խոսքերով, «յԼստամայոլ եկին և ումանք ի Թրակիա, որ Ուռումել ասի (իմա՝ Բուլղարիա), ի Վառնայո անցանելով ի Պելլոդար (Բելգրադ), մինչև ի Պուդուանայ աշխարհն (Մոլդովա) և ի Լեհացն»: Խիստ կարևոր էր նաև գաղթականության հյուսիսային ուղղությունը: XVդ. կեսերին սուլթան Բայազիդ II-ը մեծաթիվ հայերի է փեղափոխել Բուլղարիա և Կ.Պոլսի սևծովյան նշանավոր Աղբերման քաղաքից (ռումիներեն՝ Չիփարեա Ալբա, այժմ՝ Բելգորդ-Դեստրովսկի, Ռեկրահնա): 1475թ. Ղրիմի օսմանյան նվաճումը հայ գաղթականների մի նոր ալիքի սկիզբը հանդիսացավ, որը շարունակվեց նաև XVII դարի I փասնամյակներին, երբ Կաֆայից (Թեոդոսիա) հազարավոր հայեր, խույս փախելով սովի անողոր ճիրաններից, հանգրվանեցին բալկանյան այս երկրում: Վերջապես Բուլղարիա հայ բնակչության մի նոր ալիք հասավ 1673թ.՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքից: Սուլթան Մուհամմեդ IV-ի հրամանով Կ.Պոլսի վերջինիս հայ բնակիչներին փեղափոխող առաջաստանա-

վերը, հանդիպելով փոթորիկի, ափ նետվեցին Վառնայի և Սոգուպոլի շրջաններում: Աղբերից փրկված մեր հայրենակիցները հենց այսօր էլ էլ հիմնեցին իրենց նոր համայնքները: Փաստորեն, XVII դարի կեսերին էլ ավարվեց բուլղարահայ նոր գաղթավայրերի ցանցի ձևավորումը: Նշված ժամանակաշրջանում Բալկանյան թերակղզու, և, մասնավորապես, Բուլղարիայի հայ բնակչության փեղաքաշխման ու մարդաշարության վերաբերյալ խիստ բնորոշող են XVII դարի սկզբի նշանավոր ճանապարհորդ և ուղեգիր Միմենո Լեհացու հետևյալ խոսքերը. «Եւ թէ հաշուէ ի Պուդուանա մինչև Ստամայոլ, պուրոն Ուռումելին (այսօր էլ՝ Օսմանյան կայսրության եվրոպական փրկությունները) մինչև մեծն Վանափոլի, նա չկայ քաղաք, գեղ կամ չֆուրիկ (ազարակ), որ հայ չկենայ»: Ընդ որում, բուլղարահայ գաղթավայրերի վերելքն ու բարգավաճումը, առանձին ընդհարումներով, շարունակվեցին շուրջ մեկ դար՝ մինչև XVIII դարի II կեսը: Մասնավորապես դա են ցույց փախս XVIII դարի հայկական սկզբնաղբյուրների փյվյալները, որոնց մեջ առանձնանում են Միմենո Երևանցի կաթողիկոսի նշանավոր «Ջամբոր», ինչպես նաև նրա արենադպիր և զավագանակիր արքեպիսկոպոս Երեմիա Օշականցու Ս. Էջմիածնի նվիրակական թեմերի ամփոփիչ փեղեկագիրը: Դրանց ընթացումը պարզորոշ ցույց է փախս, որ ընդհուպ մինչև 1760-ական թ.թ. կեսերը հայկական մեծ ու փոքր համայնքներ էին հանդիպում Բուլղարիայի գրեթե ողջ փարածքով մեկ՝ Սև ծովի ափերից մինչև ժամանակակից բուլղարա-սերբական սահմանագլուխը: Հայաբնակ բնակավայրերի թիվն անցնում էր 2 փասնակից: Իրենց բազմամարդությամբ առանձնանում էին մայրաքաղաք Սոֆիան, Պլովդիվը (հայկական աղբյուրներում՝ Ֆիլիպե կամ Հուլուպա), Տրոնովոն (Թոնովա), Վիդինը, Բուրգասը, Վառնան, Ռուսեն (Ռուսշուկ, Ուրուշուղ), Ռազդարը (Ռազդար, Նեգարդար), Շումենը (Շումա), Պրովադիան (Փրավարի), Ստարա-Ջագորան (Էսքի-Ջաղարա) և այլն: Նշանակալից համայնքներ են եղել նաև Սիլիստրա (Սիլիստրե), Նովա-Ջագորա (Ենի-Ջաղարա, թրք.՝ Ենգիշեհիր), Այիդուս (Այդուս), Կազանլիկ, Դոբրիչ (Հաջի-օլի Պագարջիդ), Պագարջիկ (Թաթար-Բագարի), Ախելոյ (Այլոյի), Սիլվեն (Սիլմենե, Իսլիմեա), Խասկովո (Խասգեղ) և շար ուրիշ այլ գյուղաքաղաքներում ու ավաններում: Հայերը, որպես կանոն, ապրել են առանձին թաղամասերում, որոնք հիմնականում կոչվել են «Հայկական»: Այդպիսիք հիշարակվում են Սոֆիայում, ուր XVII դ. կեսին հայ բնակչության թիվն ավելի քան 1600 մարդ էր, Վառնայում, Տրոնովոյում, Շումենում, Ռազդարում, Ռուսենում և այլ քաղաքներում: Բոլոր համայնքներում, գրեթե անխորհր, գործել են հայկական եկեղեցիներ: Այս-

պես, Սոֆիայի եկեղեցին կառուցվել է 1673թ.՝ իզմիրցի մեծահարուստ Ապրո Չելեբիի միջոցներով: 1675 թվականին է հիմնվել Ֆիլիպեի (Պլովդիվ) Ս. Գևորգ (կոչվել է նաև Ս.Ստեփանոս) եկեղեցին, որը գործում է առ այսօր: Եկեղեցիներ են ունեցել նաև Ռուսեն (Ս. Աստվածածին), Բուրգասը (Ս. Աստվածածին), Վառնան (Ս. Սարգիս), Տրևոլուն (1808թ. քաղաք այցելած միսիթարյան միաբան Մինաս Բժշկյանցը, առանց անունը նշելու, փեղի եկեղեցին կոչում է «գեղեցկաշեն»), Պագարջիկը (Ս. Ստեփանոս), Գյումուլջինան (Գյումուրջին, այժմ՝ Նունասարանի կազմում, վերանվանվել է Կոմոսինի) և այլն: Արևելյան Թրակիայի Դիմեթոկա (այժմ՝ Դիդիմոփի-խոն, Նունասարան) գյուղաքաղաքի հայ համայնքը նշանավոր էր իր Ս. Գևորգ Զորավարի վանքով, որը Ղուկաս Ինճիճյանը համարում է «հռչակաւոր յայն կողմանս՝ սակս հրաշագործ պարկերի սրբոյն, և է ընդ իշխանութեամբ առաջնորդին Էրդենեու (իմա՝ Ադրիանուպոլիս, բուլղարերեն՝ Օդրին), ուր նստի փոխանորդ նորին»:

Բուլղարիայի հայկական եկեղեցիներից շարերը միաժամանակ և՛ կրթության, և՛ հայ գրչության հայտնի կենտրոններ էին: Մեզ են հասել Պլովդիվի, Սոֆիայի, Շումենի, Սիլվենի, Պրովադիայի, Ստրա-Ջագոբայի, Վառնայի հոգևոր կենտրոններում ընդօրինակված բազմաթիվ ձեռագիր մատյաններ, որոնցից երկու փասնյակը պահվում են Մաշտոցյան Մատենադարանում:

XVII-XVIII դ.դ. բուլղարահայերն ազդեցիկ դեր են ունեցել երկրի արհեստագործության և առևտրի զարգացման գործում: Որպես հնուփ վարպետներ հռչակված էին Սոֆիայի հայ դարբինները, որոնք միավորված էին առանձին համքարության («եղբայրություն», թրք.՝ էսնաֆ) մեջ: Շումենի (Շումլա) հայ պղնձագործները ևս կազմում էին առանձին էսնաֆ, որը ոչ միայն կարգավորում և վերահսկում էր ձույլ պղնձի ներմուծումը Տրապիզոն-Վառնա ծովային ուղիով, այլև արտադրանքի արտաձույնը Կ. Պոլիս: Նոչակված էին նաև հայ ոսկերիչները, զինագործները, ժամագործները, թիթեղագործները և այլք: Միջնադարյան Բուլղարիայի առևտրի զարգացման գործում բուլղարահայերն իրենց ուրույն փեղն ունեն: Բացի մանր արհեստավոր-վաճառականներից, եղել են նաև խոշոր առևտրականներ, որոնք մասնակցել են Բալկաններով ընթացող փարանցիկ միջազգային առևտրին: Բուլղարական քաղաքների փոստային զարգացման գործում անուրանալի է մեր կողմից արդեն հիշարակված Մանուկ բեյի դերը: Ռումինացի ուսումնասիրող Գեորգե Բեզվիկոնին նրան համարում է «բուլղարական քաղաքների կազմակերպիչ», ի նկատի ունենալով անշուշտ այն հսկայական ավանդը, որ բերել է այս երևելի հայտը-

դին իր հայրենի Ռուսչուկ-Ռուսեում և այլ քաղաքային բնակավայրերում մանուֆակտուրաների սրեղծման, առևտրի և փոստային զարգացման ասպարեզում:

Ցավոք, XVIII դարի II կեսը, ընդհանուր առմամբ, բացասաբար անդրադարձավ բուլղարահայ համայնքի զարգացման վրա: Օսմանյան ծանրացող հարկահանությունը, իշխանությունների բացահայտ թշնամանքն ու հալածանքները, հարկադրեցին բազմաթիվ հայ ընտանիքների կրկին վերցնելու պանդուխտի ցուպը: Նայելի արտագաղթի հեղևանքով բազմաթիվ համայնքներ XVIII դարի վերջին ուղղակի մարեցին՝ դադարելով գոյություն ունենալ: Ի դեպ, թուրքական վայրագություններն իրենց վրա զգացել են նաև հազարավոր բուլղարներ, որոնք նույնպես ստիպված էին թողնել հայրենիքը՝ ապաստան որոնելով ինչպես հարևան Վալախիայում, այնպես էլ XVIII դարի վերջին Ռուսական կայսրությանն անցած Բեսարաբիայում և Բուջակում: Արդեն XIX դարի սկզբին քիչ թե շատ բազմամարդ հայկական համայնքներ էին պահպանվել միայն Շումենում (Շումլա, 200 փուն), Ռուսեում (Ռուսչուկ) և Վառնայում (յուրաքանչյուրում 150-ական փուն), Պլովդիվում (Ֆիլիպե, 100 փուն): Փոքրաթիվ, շատ դեպքերում 2-3 փասնյակ, հայ ընտանիքներ էին հանդիպում նաև Սիլիստրա, Ռազգրադ, Այրոս, Բագարջիկ (Թաթար-Բագարի), Դոբրիչ (Նաջի-Օլլի Բագարջիկ), Պրովադիա, Գյումուլջինա բնակավայրերում: Այս փվյալների հեղինակի՝ Մ. Բժշկյանցի հաշվարկներով, 1808թ. (Բուլղարիա կարգադրած այցելության ժամանակ) ողջ բուլղարահայության թիվը հազիվ 800 փուն էր: Ընդ որում, երբեմնի բազմամարդ Սոֆիայի հայ համայնքը գրեթե անհետացել էր: «Յառաջագոյնք բազումք էին ... սակայն հայ բնակիչք ցրուեալ յայլևայլ կողմանս», - նշում է հեղինակը: Ղ. Ինճիճյանը ևս իր հերթին վկայում է, որ Սոֆիայում ապրում էին փոքրաթիվ հայ վաճառականներ («զփանին նաև յազգէս հայոց վաճառականք»): Գրեթե նույն վիճակն էր Այրոսում, ուր ըստ Մ. Բժշկյանցի մնացել էին «սակաւ փունք հայոց», Տրևոլոյում և այլուր:

Ներագա փասնամյակներին, հարկապես XIX դ. կեսերից սկսած, բուլղարահայ գաղթավայրերը կրկին հեղափոխեցին ստիպարացան և բռնեցին վերելքի ուղին: Այս հարցը, սակայն, դուրս է մեր ուսումնասիրության ժամանակագրական շրջանակներից: